ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների համաձայնեցված զարգացման մասին» 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների համաձայնեցված զարգացման մասին» 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

համաձայնեցին հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1

Համաձայնագրի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Միջազգային տրանսպորտային միջանցքի համաձայնեցված և համակարգված զարգացման նպատակով Կողմերի իրավասու մարմինների և ԱՊՀ ճյուղային Համագործակցության մարմինների համակարգումը և գործունեության տեղեկատվական ապահովումն իրականացվում է ԱՊՀ անդամ պետությունների համակարգված տրանսպորտային նիստի միջոցով»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում 2016թ. հոկտեմբերի 28-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է ԱՊՀ գործադիր կոմիտեում, որը դրա վավերացված պատճենը կուղարկի սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության:

Ադրբեջանի Հանրապետության Կառավարության կողմից	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից**
---	*/ստորագրություն/*

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Ղազախստանի Հանրապետության կողմից

Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Մոլդովայի Հանրապետության Կառավարության կողմից

Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Թուրքմենստանի Կառավարության կողմից

Ուզբեկստանի Հանրապետության Կառավարության կողմից
/ստորագրություն/

Ուկրաինայի Կառավարության կողմից

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2016թ. հոկտեմբերի 28-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների համաձայնեցված զարգացման մասին» 2009 թվականի նոյեմբերի 20-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն